

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ

Գնահատումն իրականացվել է անկախ փորձագետ
բ.գ.թ. Շուշան Դոյդոյանի կողմից

ԵՐԵՎԱՆ 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	4
ՏՎՅԱԼՆԵՐ ԶԱՐՑՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	5
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԵՎ ԶԻՄՆԱԿԱՆ ԽՈԶԸՆԴՈՏՆԵՐԸ.....	9
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.....	..20
ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվության ազատության մասին (այսուհետև՝ ՏԱ) ՀՀ օրենքն ընդունվել է 2003թ.-ի սեպտեմբերի 23-ին: Մինչ օրս Էական առաջընթաց է գրանցվել օրենքի կիրառման եւ կառավարության թափանցիկության ապահովման պրակտիկայում, ներդրվել են բազմաթիվ էլեկտրոնային գործիքներ, սակայն դեռևս առկա են որոշ խնդիրներ, որոնք խոչընդոտում են պետական կառավարման համակարգում լիարժեք հրապարակայնությանն ու տեղեկատվության ազատությանը: Առկա խնդիրներից մեկն է պետական կառավարման համակարգում տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու պաշտոնյաների գիտելիքի եւ հմտությունների ոչ բավարար լինելը: Կառավարման բոլոր ոլորտներն ունեն տեղեկատվության բանիմաց պատասխանատուների կարիք:

Հաղորդակցության եւ տեղեկատվության ազատության վերաբերյալ կանոնավոր եւ արդյունավետ վերապատրաստումներ կազմակերպելուց առաջ անհրաժեշտ է նախ գնահատել պետ. մարմինների կարիքներն ու ակնկալիքներն այդ դասընթացներից: Սույն ուսումնասիրությունը ***նպատակ ունի գնահատել*** ՏԱ մասին ՀՀ օրենքի վերաբերյալ պետական կառավարման մարմիններում տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու պաշտոնյաների (խոսնակներ, տեղեկատվության ազատության պատասխանատու անձիք, հասարակայնության հետ կապերի բաժինների աշխատակիցներ եւ այլն) վերապատրաստումների կարիքները տեղեկատվության ազատության եւ հաղորդակցության ոլորտներում, ինչը հնարավորություն կտա մշակել ՏԱ խնդիրներին նվիրված վերապատրաստման համապարփակ եւ հասցեական ծրագիր: Հատկապես ներկայում բազմաթիվ են այս թեմաներով իրականացվող վերապատրաստումները, սակայն կարելի է, որ դրանք իրապես բխեն համակարգի կարիքներից, ունենան դրանք բավարարելու ժամանակակից մեթոդաբանություն եւ ձեւավորեն միասնական պրակտիկա, եւ ամենակարելի, համալրեն մեկը մյուսին եւ բացառեն բովանդակային կրկնությունները:

Սույն գնահատումն իրականացվել է 2020 թվականի մարտ-ապրիլ ժամանակահատվածում: Գնահատման մեջ ընդգրկվել են պետական կառավարման բոլոր 38 մարմինները՝ նախարարություններ, մարզպետարաններ, Կառավարության եւ Վարչապետին առընթեր մարմիններ (ամբողջական ցանկը տես՝ Հավելված 1-ում):

Ուսումնական ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վերապատրաստումների կարիքների գնահատման առաջնային նպատակը ՏԱ ոլորտում վերապատրաստման դասընթացներից պետական կառավարման մարմիններում տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու պաշտոնյաների ակնկալիքների, ՏԱ օրենքի ու վերջինիս կիրարկման մեխանիզմների վերաբերյալ նրանց գիտելիքի խորացման անհրաժեշտության բացահայտումն է:

Գնահատման խնդիրներն են.

- Գնահատել վերջին երեք տարիներին ՏԱ ուսուցումներին պաշտոնյաների մասնակցության մակարդակը:
- Վերապատրաստման դասընթացների կարիքների որոշում՝ անկախ ՏԱ պատասխանատուների ոլորտային ներգրավվածության:
- Վերապատրաստման կարիքների սահմանում:

Գնահատումն իրականացնելու նպատակով նախապես մշակվել է առցանց հարցաշար եւ ներկայացվել պետական կառավարման բոլոր 38 մարմինների մամուլի խոսնակներին, ՏԱ պատասխանատու անձանց, հասարակայնության հետկապերի բաժինների աշխատակիցներին լրացման (յուրաքանչյուր մարմնից առավելագույնը երկուական անձի կողմից): Հարցաշարը տես Հավելված 2-ում:


Լրացված առցանց հարցաթերթերն ուսումնասիրվել և ստուգվել են՝ հիմնվելով ակադեմիական մեթոդների վրա: Ուսումնասիրության հիման վրա մշակվել է գնահատման այս հաշվետվությունը, որը նաեւ գործնական առաջարկություններ է պարունակում այն մասին, թե ինչպես լրացնել տեղեկատվության տրամադրման համար պատասխանատուների ՏԱ մասին գիտելիքի բացերը և կատարելագործել ՏԱ օրենքի կիրառման մեխանիզմները: Սա հիմք կարող է դառնալ տեղեկատվության պատասխանատուների համար միասնական վերապատրաստման ծրագիր մշակելու համար:

ՏՎՅԱԼՆԵՐ ԶԱՐՑՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առցանց հարցաշարը լրացրել եւ վերադարձրել է պետական կառավարման 38 մարմնի 66 աշխատակից, որոնք կամ տեղեկատվության ազատության պատասխանատուներ են, կամ մամուլի խոսնակներ, կամ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների աշխատակիցներ:

Ինչպես երեւում է ստորեւ գծապատկեր 1-ինում՝ 66 մասնակիցների 79%-ը կանայք են, իսկ 21%-ը՝ տղամարդիկ: Ուշագրավ է, որ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում, հարցմանը մասնակցած պաշտոնյաների մեծ մասը 43.9%-ը կամ 29 հոգի 31-40 տարեկան են: Հաջորդում են 41-50 տարեկանները 21.2%, 20-30 տարեկանները կազմել են մյուս խումբը՝ 13.6%-ով: 60-անց եղել է ընդամենը 4 հոգի՝ 6%:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1



Հարցման բոլոր մասնակիցներն ունեն բարձրագույն կրթություն, նրանցից 24-ը կամ 36,4%-ն ունեն լրագրողական կրթություն: Հարցվածների 53%-ը կամ 35 հոգի նշել է, որ տեղեկություն տրամադրելը մտնում է իր պարտականությունների մեջ եւ համարվում է ՏԱ պատասխանատու անձ (գծապատկեր 2):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Համարվում են ՏԱ պատասխանատու անձ			
ԱՅՈ		ՈՉ	
հոգի	%	հոգի	%
35	53	31	47


Ոչ պատասխանած 31 պաշտոնյաները թեեւ չեն համարվում ՏԱ պատասխանատու, սակայն տրամադրում են տեղեկատվություն քաղաքացիներին կամ լրագրողներին:

Այսպիսով, հարցված բոլոր պաշտոնյաները այս կամ այն ձևաչափով տրամադրում են տեղեկատվություն քաղաքացիներին կամ լրագրողներին:

Մասնակիցները բացառապես պետ. կառավարման մարմինների ներկայացուցիչներ են: 24 մասնակից Վարչապետի աշխատակազմից եւ Նախարարություններից է, 25 մասնակից Վարչապետին կամ կառավարությանն առընթեր մարմիններից, 17 մասնակից՝ մարզպետարաններից:

Տես՝ ստորեւ գծապատկեր 3-ը.


ԳԾԱՊԱՏԿԵՐ 3



Մասնագիտական եւ աշխատանքային փորձ

Գնահատել եւ ուսումնասիրել ենք նաեւ մասնակիցների աշխատանքային փորձը պետ. կառավարման համակարգում եւ մասնագիտական փորձը հաղորդակցության ոլորտում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4



Ինչպես երեւում է գծապատկեր 4-ում, **ամենից շատ մասնակիցները ներկայացնում են 15 եւ ավելի տարի աշխատանքային փորձ ունեցողները (22 անձ), որոնք նաեւ ունեն հարուստ մասնագիտական փորձ (19 անձ ունի ավելի քան 15 տարվա աշխատանքային փորձ):** Եւս 17 անձ ունի 11 տարի եւ ավել աշխատանքային մասնագիտական փորձ հաղորդակցության ոլորտում: Այսինքն, 50%-ը կամ 33 հոգի ունի 11 եւ ավելի մասնագիտական փորձ այս ոլորտում: Աղյուսակը վկայում է, որ մասնակիցներն ունեն բավական հարուստ եւ՝ աշխատանքային, եւ՝ մասնագիտական փորձ հաղորդակցության եւ տեղեկատվության ազատության ոլորտում:

Օտար լեզուների իմացություն

Դրական է պատկերը մասնակիցների օտար լեզուների իմացության հարցում: Այսպես.

Ռուսերեն - Ինչպես երեւում է գծապատկեր 5-ում, մասնակիցների գրեթե 96%-ը լավ կամ գերազանց տիրապետում է ռուսերենին: Մնացած 4%-ը նշել է, որ միջին մակարդակով տիրապետում ռուսերենին: Փաստորեն, բոլորը տիրապետում են ռուսերենին:

Անգլերեն - Անգլերենի պարագայում մասնակիցների միայն 16.7%-ն է գերազանց տիրապետում: 36%-ը նշել է, որ լավ է տիրապետում անգլերենին, 12 տոկոսը՝ թույլ:

Ֆրանսերեն - Ֆրանսերենին գերազանց տիրապետում է մասնակիցներից միայն մեկը, լավ տիրապետում է 4-ը: Եւս 6 հոգի թույլ է տիրապետում: Մյուսները չեն նշել:

Գերմաներեն - Գերմաներենին գերազանց տիրապետում է 2 մասնակից, 1 հոգի՝ լավ, 2 հոգի՝ միջին մակարդակի: Մյուսները չեն նշել:

Այլ լեզուներ - 2 հոգի գերազանց տիրապետում է թուրքերենին: 1 հոգի գերազանց գիտի իսպաներեն, մեկը՝ միջին մակարդակի՝ վրացերեն, եւս մեկը միջին մակարդակի տիրապետում է ճապոներենի:


ԳԾԱՊԱՏԿԵՐ 5. Օտար լեզուներ տիրապետելու մակարդակը

Լեզու/տիրապետման աստիճան	Թույլ		միջին		լավ		գերազանց	
	հոգի	%	հոգի	%	հոգի	%	հոգի	%
Ռուսերեն			3	4.5	34	51.5	29	43.9
Անգլերեն	8	12.1	17	25.7	24	36.4	11	16.7
Ֆրանսերեն	6		3	4.5	4	6.1	1	1.5
Գերմաներեն			2	3	1	1.5	2	3
Թուրքերեն	2	3.1	-		-	-	-	-
Վրացերեն			1	1.5	-	-	-	-
Իսպաներեն			-	-	-	-	1	1.5
Ճապոներեն			1	1.5				

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԵՆ ԴԻՄՆԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Ձեր կարծիքով ՀՀ-ում տեղեկատվության ազատության կիրառման մակարդակը բավարար է հարցին մասնակիցների 47%-ը նշել է՝ այո, իսկ մասամբ նշել է 53%-ը: Մասնակիցներից որեւէ մեկը չի համարել, որ ՏԱ կիրառման մակարդակը ՀՀ-ում բավարար չէ: Տես՝ ստորեւ գծապատկեր 6-ը:

ԳԾԱՊԱՏՎԵՐ 6



Ուսումնասիրության այս մասում պարզաբանվում է, թե հարցմանը մասնակցած պաշտոնյաները որոնք են համարում տեղեկատվության ազատության հիմնական խոչընդոտները: Արդյունքները պատկերված են գծապատկեր 7-ում: Մասնակիցներին տրվել է մեկից ավելի պատասխան ընտրելու հնարավորություն: Հարցին մասնակիցների 64%-ը գտնում է, որ հիմնական խնդիրը քաղաքացիների՝ իրենց իրավունքների մասին ոչ բավարար իմացությունն է, եւս 34%-ը կարծում է, որ գործող օրենսդրությունը բավարար չէ: Խնդիրների շարքում երրորդ տեղում է կառույցի ներսում ներքին համակարգման պակասը: Եւս 29 հոգի համարում է, որ պատճառներից մեկը կառույցի ներսում ՏԱ պատասխանատու անձի ոչ բավարար ստատուսի առկայությունն է: Մասնակիցների 18.2%-ը նշել է, որ հիմնական խնդիրն այն է, որ կառավարությունը չունի տեղեկություններ տրամադրելու միասնական համակարգ:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 7. Որո՞նք եք համարում ՏԱ ոլորտում հիմնախնդիրները

Հիմնախնդրի նկարագրություն	հոգի	%
Մարդիկ տեղյակ չեն իրենց իրավունքներից	42	63.6
Գործող օրենսդրությունը բավարար չէ	23	34.5
Ներքին համակարգման պակասը	16	24.2
ՏԱ պատասխանատու անձի ստատուսի հարցը	13	19.7
Տարբեր մարմիններում տեղեկություններ տրամադրելու գործառույթը դրված է տարբեր վարչությունների, բաժինների և մասնագետների վրա	13	19.7
Կառավարությունը չունի տեղեկություններ տրամադրելու միասնական համակարգ	12	18.2
Պաշտոնյաները չեն կատարում օրենքով նախատեսված իրենց պարտականությունները	6	9.1

Հարցման մասնակիցները մի քանի գաղափար են առաջ քաշել ուղղված վերոնշյալ խոչընդոտների հաղթահարմանը: Ստորև ամփոփված են նրանց առաջարկները.


- Ազգային մտածողության փոփոխություն;
- Ստորաբաժանումների ղեկավարների ուսուցումներ;
- Չարգացած երկրների միջազգային փորձի ներդրում;
- Վերապատրաստման դասընթացների կանոնավոր կազմակերպում;
- Մարդիկ հաճախ տեղեկատվություն տրամադրելիս ոչ միշտ են լիարժեք տրամադրում, կա ինչ-որ անվստահություն;
- Գործիքակազմի հարստացում;
- Օրենսդրական փոփոխություններ, պատասխանատու կառույցի ստեղծում, որը կապահովի այդ ամենը;
- Բոլոր կողմերի իրական համագործակցություն;
- Հանրությանը տեղեկացնել և կրթել իրենց իրավունքների մասին;
- Չարգացնել հանրության հետ կապերի և մամուլի վարչությունների/կենտրոնների մարդկային և տեխնիկական ռեսուրսները;
- Կառավարությունը պետք է սերտորեն համագործակցի ՀԿ սեկտորի հետ և հանրությանը բացատրի, թե որ մարմնից ինչ տեղեկություններ կարելի է ստանալ, որտեղ և ինչպես օգտվել տեղեկություններ ստանալու իրավունքից;
- Ընդունել տեղեկություններ տրամադրելու կարգեր, որոնք պետք է հստակեցնեն, թե ինչպես տեղեկություններ տրամադրել հանրությանը:

Պաշտոնական տեղեկություններ տարածելու ամենաարագ և ամենաարդյունավետ միջոցները

Ո՞րն եք համարում պաշտոնական տեղեկություններ տարածելու ամենաարագ և ամենաարդյունավետ միջոցը հարցին մասնակիցների հիմնական մասը նշել է միաժամանակ մի քանի միջոցի/գործիքի համադրում: Ամենից հաճախ նշվել է 3 հիմնական գործիքների մասին՝ պաշտոնական կայքեր, սոցիալական ցանցերի պաշտոնական էջեր և ՉԼՄ-ներ:

Ինչպես պատկերված է գծապատկեր 8-ում՝ մասնակիցների 64%-ը նշել է սոցիալական ցանցերի կարևորության մասին: Պաշտոնական կայքերի և ՉԼՄ-ների կարևորությունը գրեթե նույնական է՝ 40-45%: Հատկանշական է, որ պաշտոնական կայքերը որպես գործիք նշող մասնակիցները գրեթե միշտ դրանք զուգակցում են այլ գործիքի հետ, հաճախ հենց սոցիալական ցանցերի:


ԳԾԱՊԱՏԿԵՐ 8. Ո՞րն եք համարում պաշտոնական տեղեկություններ տարածելու ամենաարագ և ամենաարդյունավետ միջոցը.



Համեմատության համար հետաքրքիր է արձանագրել, որ 2007 թվականին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի անցկացրած հարցման տվյալներով՝ պաշտոնատար անձանց 87.5 տոկոսը (91 հոգի) համարում էին, որ պաշտոնական կայքերը պաշտոնական տեղեկություններ տարածելու ամենաարագ և ամենաարդյունավետ միջոցն են: 2004թ.-ին նմանատիպ հարցման տվյալները վկայում են, որ պաշտոնյաների մեծամասնության՝ 77.5 տոկոսի համար տեղեկատվության տարածման ամենաարագ միջոցը ՉԼՄ-ներն էին: Հետաքրքիր է, որ եթե 2007 եւ 2004թթ. վերլուծությունների համաձայն՝ մամուլի ասուլիսները ամենաարդյունավետ երկրորդ միջոցն են նշվել մասնակիցների կողմից, ապա այս վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայում շատ քիչ պաշտոնյաներ են մամուլի ասուլիսները համարում արդյունավետ (6%-ից քիչ): Ինչպես երեւում է գծապատկեր 9-ում՝ մասնակիցների 89.4%-ը նշել է, որ


կայքը թարմացվում է ամեն օր: Շաբաթական 2 անգամ թարմացնում է մասնակիցների 3%-ը, 6%-ը՝ այլ հաճախականությամբ:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 9. Ի՞նչ հաճախականությամբ են թարմացվում պաշտոնական կայքերը:



Գծապատկեր 10-ի համաձայն՝ մասնակիցների 82 տոկոսը նշել է, որ իրենց պաշտոնական կայքը հարմարեցված չէ տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար: Մի քանի պաշտոնական կայքեր քայլեր ձեռնարկել են տեսողության խնդիրներ ունեցողների համար կայքը մաքելի դարձնելու ուղղությամբ (օրինակ, ԱԳՆ, ԱԱԾ եւ հատկապես Սոցապ նախարարության պաշտոնական կայքերը լավ օրինակ կարող են լինել մյուս կառույցների համար):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 10. Հարմարեցված է ձեր կայքը տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար



Տեղեկատվություն տարածելու գործիքները

Քանի՞ մամուլի ասուլիս (ներառյալ՝ առցանց) է կազմակերպել Ձեր գերատեսչությունը վերջին երեք ամիսների ընթացքում:

Մասնակիցների 1/3 նշել է, որ վերջին 3 ամիսների ընթացքում որեւէ մամուլի ասուլիս չի կազմակերպվել իրենց կառույցում: 40%-ը նշել է, որ կազմակերպվել է 1 կամ 2 անգամ եւ 30%-ը նշել է, որ կազմակերպվել են 3 եւ ավելի անգամ:

Քանի՞ մամուլի հաղորդագրություն եք տարածել վերջին մեկ ամսվա ընթացքում:

Մամուլի հաղորդագրություններ առավել հաճախ են պատրաստվում եւ տարածվում: Մասնակիցների գերեթե 80%-ը նշել է, որ վերջին 3 ամիսների ընթացքում տարածվել է 3 եւ ավելի մամուլի հաղորդագրություն: Որեւէ մամուլի ասուլիս չի կազմակերպվել 3%-ի դեպքում:

ՖԲ կամ այլ սոցիալական ցանցերում քանի՞ պաշտոնական գրառում եք արել արել վերջին մեկ շաբաթվա ընթացքում:

Ի տարբերություն տեղեկատվության տարածման ավանդական միջոցների, պետական կառույցներն այդ նպատակով առավել ակտիվ օգտագործել են սոցիալական ցանցերը: Մասնակիցների 65%-ը նշել է, որ վերջին 1 շաբաթվա ընթացքում կատարել է 6 եւ ավելի գրառում սոց. ցանցերում, 24%-ը՝ շաբաթը 3-5 գրառում, 5%-ը՝ 1-2 գրառում, եւ միայն 6%-ն է նշել, որ որեւէ պաշտոնական գրառում չի կատարել:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 11. Տեղեկատվություն տարածելու գործիքներ

Հաղորդակցման գործիքներ	0		1-2		3 և ավելի			
	հոգի	%	հոգի	%	հոգի	%		
Մամուլի ասուլիսների քանակը 3 ամսվա կտրվածքով	20	30.3	26	39.4	20	30.3		
Մամուլի հաղորդագրությունների քանակը 1 ամսվա կտրվածքով	2	3	12	18.2	52	78.8		
Պաշտոնական գրառումների քանակը սոցիալական ցանցերում 1 շաբաթվա կտրվածքով	0		1-2		3-5		6 և ավելի	
	հոգի	%	հոգի	%	հոգի	%	հոգի	%
	4	6.1	3	4.5	16	24.2	43	65.2

Հարցումներին ընթացք տալը

Գծապատկեր 12-ում ներկայացվում է, թե քանի տեղեկություն ստանալու հարցում են ստանում մարմինները տարբեր խողովակներով: **Գծապատկերը ցույց է տալիս, որ մեզանում առայժմ սոցիալական ցանցերն ավելի շատ կիրառվում են որպես տեղեկատվության տարածման, քան ստացման միջոց:** Ուստի, մարմինները պետք է հաշվի առնեն այս հանգամանքը իրենց հաղորդակցության պլանները մշակելիս:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 12 Հարցումների ստացման խողովակները

Հարցումների ստացման խողովակ	0-1 հարցում		2-5 հարցում		6-10 հարցում		11-20 հարցում		20 և ավելի հարցում	
	հոգի	%	հոգի	%	հոգի	%	հոգի	%	հոգի	%
Բանավոր հարցումների միջին քանակը օրական կտրվածքով	12	18.2	24	34.8	17	25.8	6	9.1	8	12.1
Գրավոր/Էլեկտրոնային հարցումների միջին քանակը օրական կտրվածքով	17	25.8	39	59.1	7	10.6	-	-	3	4.5
Սոցիալական ցանցերով ստացված հարցումների քանակը օրական կտրվածքով	22	33.3	21	31.8	11	16.7	4	6.1	8	12.1

Ինչպես երևում է վերը նշված աղյուսակում՝ 60%-ը նշել է, որ օրական ստանում է 2-5 գրավոր հարցում: 26%-ը նշել է, որ ստանում է օրական 6-10 հարցում: 2-5 բանավոր հարցում է ստանում հարցվածների 35%-ը: 27%-ը ստանում է 6-10 բանավոր հարցում օրվա ընթացում:

Սոցիալական ցանցերի միջոցով 32%-ը ստանում է օրական 2-5 հարցում, իսկ 33.3%-ը՝ մինչև 1 հարցում: Միայն 16.7%-ն է ստանում 6-10 հարցում սոց. ցանցերի միջոցով:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 13

Ձեր կառույցում ո՞ր ստորաբաժանման կամ աշխատակցի պարտականությունն է լրագրողներին տեղեկություն տրամադրելը հարցին մասնակիցների մեծամասնությունը՝ 45 հոգի կամ 68%-ը որպես լրագրողներին տեղեկատվություն տրամադրող նշել է հանրային կապերի եւ տեղեկատվության ստորաբաժանումը: Նշենք, որ այս ստորաբաժանումը տարբեր մարմիններում տարբեր կառուցվածք է անվանում ունի.

- Մարզպետարաններում՝ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին;
- Տեսչական մարմիններում՝ Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին;

- Նախարարություններում ստորաբաժանումը տարբեր է՝ բաժին կամ վարչություն (12 նախարարություններից 7-ի դեպքում վարչություն է, 5-ում՝ բաժին):

Այդ ստորաբաժանումները տարբեր մարմիններում նաեւ տարբեր անվանումներ ունեն.

- Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության
- Տեղեկատվության և հասարականության հետ կապերի
- Հասարակայնության հետ կապերի
- Միայն ԱԳՆ-ում՝ Լրատվության և հանրային դիվանագիտության վարչություն:

Այսպիսով, ինչպես պատկերված է գծապատկեր 13-ում, մասնակիցների 68 տոկոսը նշել է, որ իրենց կառույցում լրագրողներին տեղեկատվություն տրամադրելու պարտավորություն ունի հանրային կապերի եւ տեղեկատվության ստորաբաժանումը: 7 մասնակից կամ 10.6%-ը որպես հիմնական պատասխանատու նշել է ղեկավարի մամուլի քարտուղարին, ևս 7 մասնակից 10.6%-ը գլխավոր քարտուղարին հիշատակել են ստորաբաժանման հետ միաժամանակ: 2 մասնակից կամ 3% նշել է, որ դրա իրավունքն ունեն բոլոր ստորաբաժանումները: Մեկ մասնակից նշել է կառույցի ղեկավարին, 6.1%-ը նշել է գերատեսչության ղեկավարի օգնական, գլխավոր քարտուղար/ՏԱ պատասխանատու:

Այսպիսով, պետական կառավարման մարմիններում պրակտիկան խիստ բազմազան է եւ շատ հեռու միասնական լինելուց: Տարբեր մարմիններում տեղեկություններ տրամադրելու գործառույթը դրված է տարբեր ստորաբաժանումների վրա:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 13. Ո՞ր ստորաբաժանման կամ աշխատակցի պարտականությունն է լրագրողներին տեղեկություն տրամադրելը

<i>Ստորաբաժանում եւ/կամ պաշտոնյա</i>	<i>հոգի</i>	<i>%</i>
Հանրային կապերը համակարգող ստորաբաժանումը	45	68.2
Գերատեսչության ղեկավարի մամուլի քարտուղար/խոսնակ	7	10.6
Հանրային կապերը համակարգող ստորաբաժանումը և մամուլի քարտուղարը միաժամանակ	7	10.6
Գերատեսչության ղեկավարի օգնական/գլխ. քարտուղար (որպես ՏԱ պատասխանատու)	4	6.1
Բոլոր ստորաբաժանումները	2	3
Գերատեսչության ղեկավարը	1	1.5

ԳԾԱՊԱՏԿԵՐ 14

Ինչպիսի՞ն է քաղաքացիների հարցումներին պատասխանելու պրակտիկան: Ձեր կառույցում ո՞ր ստորաբաժանման կամ աշխատակցի պարտականությունն է քաղաքացիներին տեղեկատվություն տրամադրելը: **Հարցումները ցույց տվեցին, որ քաղաքացիների հարցումներին խոսնակներն ընդհանրապես չեն արձագանքում:** Մասնակիցների 32 տոկոսը նշել է, որ նման պարտավորություն ունեն բոլոր ստորաբաժանումները՝ կախված հայցվող տեղեկատվության բնույթից: 27 տոկոսը նշել է, որ դա հանրային կապերը համակարգող ստորաբաժանման խնդիրն է: Մանրամասները տես ստորել 14-րդ աղյուսակում.

ԳԾԱՊԱՏԿԵՐ 14. Ո՞ր ստորաբաժանման կամ աշխատակցի պարտականությունն է քաղաքացիներին տեղեկատվություն տրամադրելը:

<i>Ստորաբաժանում եւ/կամ պաշտոնյա</i>	<i>հոգի</i>	<i>%</i>
Բոլոր ստորաբաժանումները՝ կախված տեղեկատվության ոլորտից:	21	31.8
Հանրային կապերը համակարգող ստորաբաժանումը	18	27.3
Հանրային կապերը համակարգող ստորաբաժանումը և որևէ այլ ստորաբաժանում	15	22.7
Ընդհանուր բաժին/քարտուղարություն/	11	16.7
Գերատեսչության ղեկավարը	1	1.5

ԳԾԱՊԱՏԿԵՐ 15. Տեղեկություն ստանալու հարցումների գրանցումը

Հարցմանը մասնակցած բոլոր պաշտոնյաները նշել են, որ իրենց գերատեսչությունում ստացված հարցումները գրանցվում են: Ընդ որում, 52 տոկոսը նաեւ նշել է, որ տեղեկություն ստանալու հարցումների գրանցումն իրականացվում է գործավարության մյուս ձևերից առանձին (սա նաեւ ՏԱ մասին ՀՀ օրենքի պահանջ է):

Մալբերի փաստաթղթաշրջանառության համակարգ մուտքագրվող յուրաքանչյուր տեղեկություն ստանալու հարցման դեպքում ոչ միշտ է, որ Տեղեկատվության ազատության պատասխանատուն կամ ստորաբաժանումը տեղեկանում է այդ մասին: Հարցման մասնակիցների 18%-ը նշել է, որ ՏԱ պատասխանատուն ոչ միշտ է տեղեկացվում հարցումների մուտք լինելու մասին: Մանրամասները պատկերված են ստորել աղյուսակում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 15

Տեղեկություն ստանալու հարցումների գործավարություն	ԱՅՈ		ՈՉ	
	հոգի	%	հոգի	%
Տեղեկություն ստանալու հարցումների գրանցումն իրականացվում է գործավարության մյուս ձևերից առանձին:	34	51.5	32	48.5
ՏԱ պատասխանատուն ստանում է տեղեկացում Mulberry համակարգ մուտքագրվող յուրաքանչյուր հարցման դեպքում	54	81.8	12	18.2

ԳԾԱՊԱՏԿԵՐ 16 Գրանցում էք արդյոք սոցիալական ցանցերով ստացված տեղեկություն ստանալու հարցումները:
Առկա՞ է ձեր կառույցի աշխատակիցների կողմից սոցիալական ցանցերում ստատուսներ գրելու որոշակի գրված ընթացակարգ:

Ինչպես երևում է ստորև գծապատկեր 16-ում՝ մասնակիցների 63.6 տոկոսը նշել է, որ իրենց կառույցում գրանցվում են սոցիալական ցանցերով ստացված տեղեկություն ստանալու հարցումները: Բարձր է նաև պետական կառույցների ակտիվությունը սոցիալական տարբեր ցանցերում, թեև մարմինների ճնշող մեծամասնությունում առկա չեն պաշտոնական գրառումներ անելու մշակված կամ հաստատած միասնական ընթացակարգեր: Միայն 4.5 տոկոսն է նշել, որ իրենց մարմնում առկա են սոց.ցանցերում աշխատելու որոշակի կանոններ: Լավագույն օրինակ ՀՀ ԱԳՆ-ի կողմից մշակված Սոցիալական մեդիայի օգտագործման ուղեցույցն է:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 16. Հաղորդակցությունը սոցիալական ցանցերով

Հաղորդակցման կարգը սոցիալական ցանցերով	ԱՅՈ		ՈՉ	
	հոգի	%	հոգի	%
Սոցիալական ցանցերով ստացված տեղեկություն ստանալու հարցումները գրանցվում են:	42	63.6	24	36.4
Առկա է սոցիալական ցանցերում ստատուսներ գրելու մշակված և պաշտոնապես հաստատված ընթացակարգ:	3	4.5	63	95.5

ԳԾԱՊԱՏԿԵՐ 17

Պե՞տք է արդյոք լրագրողները տեղեկություններ ստանալու արտոնություններ ունենան: Արդյո՞ք գործնականում տեղեկություններ տրամադրելիս որևէ տարբերություն դնում եք դիմող քաղաքացիների և լրագրողների միջև:

Թեև տեղեկություններ ստանալու իրավունքը յուրաքանչյուրին է և ՏԱ մասին ՀՀ օրենքը որևէ արտոնություն լրագրողների համար չի նախատեսում, սակայն գործնականում որոշ դեպքերում պաշտոնյաներն ավելի պատրաստակամությամբ են տեղեկություններ տրամադրում լրագրողներին, քան սովորական քաղաքացիներին: Հարցումներից պարզ դարձավ, որ մասնակիցների 59%-ը գտնում է, որ լրագրողները պետք է որոշակի արտոնություններ ունենան տեղեկություն ստանալու գործընթացում (համեմատության համար նշենք, որ 2007թ.-ին այս ցուցանիշն ընդամենը 15.3%-ն էր կազմում):

Հարցված պաշտոնյաների 83%-ը նշել է, որ իրենց կարծիքով գործնականում տեղեկություններ տրամադրելիս քաղաքացիների և լրագրողների միջև տարբերություններ դրվում են (2007 թվականին 81%-ը (կամ 84 հոգի) նշել էր, որ տեղեկություններ տրամադրելիս որևէ տարբերություն չի դնում շարքային քաղաքացիների և լրագրողների միջև):

Ինչպե՞ս է գործնականում արտահայտվում այդ տարբերակված մոտեցումը: Մասնակիցները նշել են հետևյալ առանձնահատկությունների մասին.

- Լրագրողներին տեղեկությունները տրամադրվում են օրենքով սահմանված սեղմ ժամկետներում:
- փորձում ենք ավելի օպերատիվ լինել գլմ-ի դեպքում՝ հաշվի առնելով նյութի եթեր հեռարձակելու կամ տպագրելու գործոնը:
- Օրենքը հստակ սահմանում է լրագրողի հարցմանը պատասխանելու ժամկետներն ու կարգը: Քաղաքացիների դեպքում այլ ժամկետներ են սահմանվում և կախված տեղեկատվության բնույթից՝ այլ ընթացք է տրվում՝ անհրաժեշտության դեպքում:
- Միակ տարբերությունն այն է, որ օրենքով սահմանվում են լրագրողին պատասխան տրամադրելու հստակ ժամկետներ:
- Նույն օրվա եթեր ունեցող լրագրողին ընդառաջում ենք ավելի արագ ստանալ տեղեկությունը:
- Ավելի արագ ենք արձագանքում:
- Ամեն ինչ կախված է կոնկրետ իրավիճակից արտոնությունը ինքնանպատակ չպետք է լինի:


Ինչպես երեւում է որոշ պատասխաններից, որոշ կառույցներում դեռևս հստակ չեն պատկերացնում, որ անկախ դիմողի անձից, տեղեկություն ստանալու հարցումներին ընթացք պետք է տրվի նույն կարգով եւ ժամկետներում: Լրագրողները չունեն առավել սեղմ ժամկետում տեղեկություն ստանալու արտոնություն:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 17. Լրագրողների տեղեկություն ստանալու կարգին առնչվող հարցեր

Լրագրողների տեղեկություն ստանալու կարգին առնչվող հարցեր	ԱՅՈ		ՈՉ	
	հոգի	%	հոգի	%
Լրագրողները պետք է տեղեկություններ ստանալու արտոնություններ ունենան:	39	59.1	27	40.9
Գործնականում տեղեկություններ տրամադրելիս քաղաքացիների և լրագրողների միջև տարբերություններ դրվում են:	55	83.3	11	16.7

Պարզել ենք նաև, թե արդյոք պետական կառավարման մարմիններում առկա՞ է հաղորդակցության ռազմավարություն: Այս հարցին մասնակիցների 53%-ը դրական պատասխան է տվել: Նշենք, որ 2019 թվականի հունիսին մեր կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց էր տվել, որ պետական կառավարման մարմինների միայն 1/3-ը ունի հաղորդակցության ռազմավարություն: Սա վկայում է այն մասին, որ մարմիններում քայլեր են ձեռնարկվել նշված ժամանակահատվածում լրացնելու այս բացը:


ԳԾԱՊԱՏԿԵՐ 18



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ


Հարցմանը մասնակցած պաշտոնյաների 37.9%-ը կամ 25 հոգի նշել է, որ ՏԱ հարցերով ուսուցման չի մասնակցել վերջին երեք տարիների ընթացքում: 37.9%-ը կամ 2 հոգի նշել է, որ մասնակցել է միայն 1 անգամ: Միայն 24%-ը կամ 16 հոգի է նշել, որ մասնակցել է 2 եւ ավելի ուսուցման:

ԳԾԱՊԱՏՎԵՐ 19




Փաստորեն, 37.9%-ը վերջին 3 տարիների ընթացքում որեւէ վերապատրաստման չի մասնակցել այս ոլորտում: Միայն 41 մասնակից է մասնակցել առնվազն մեկ ուսուցման վերջին 3 տարիների ընթացքում: Ուսուցումների մասնակցած անձանցից 21-ն է նշել, որ վերահատրաստումը եղել է տեղեկատվության ազատության վերաբերյալ:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 20



Ուսուցումների մասնակցած 41 պաշտոնյա նաեւ կարծիք է հայտնել, թե որքանով են դրանք արդյունավետ եղել իրենց աշխատանքային փորձը հարստացնելու համար: **Ճնշող մեծամասնությունը՝ 90.2 տոկոսը նշել է, որ վերապատրաստումները բավարար չափով արդյունավետ են եղել: 9.8 տոկոսի համար դրանք եղել են շատ արդյունավետ: Նշենք, որ որեւէ մեկի համար վերապատրաստումներն անարդյունավետ չեն եղել:**

ԳԾԱՊԱՏԿԵՐ 21



Մասնակիցներին նաեւ խնդրել ենք մեկնաբանել, թե ինչն է իրենց կարծիքով վերապատրաստումների նվազ արդյունավետ լինելու պատճառը: Նրանք հնարավորություն են ունեցել ինչպես իրենց կարծիքը հայտնելու, այնպես էլ ներկայացվող տարբերակներից մեկը կամ մի քանիսն ընտրելու:


Հարցմանը մասնակցած որոշ պաշտոնյաներ կարծիք են հայտնել իրենց մասնակցությամբ անցած դասընթացների ձևաչափի և արդյունավետության վերաբերյալ (այս հարցին պատասխանել է 20 մասնակից):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 22. Վերապատասխանումների հիմնական թերությունները

Հիմնական խնդիրներ (20 մասնակից)	հոգի	%
Նույնաբովանդակ ուսուցումների առկայությունը	8	40
Պրակտիկ գիտելիքի պակասը ուսուցումների ժամանակ	8	40
Շարունակական ուսուցումների բացակայությունը	7	35
Ուսուցումների տևողությունը կարճ է	7	35
Ուսուցումների մեթոդաբանությունը չի թարմացվում և արդիականացվում	7	35
Ուսուցումները չեն անցկացվում որոշում կայացնողների համար	6	30
Ուսուցումները կազմակերպվում են դոկոր կազմակերպությունների նպատակահարմարությամբ	5	25
Գործնական և տեսական գիտելիքի համադրման բացակայությունը	3	15
Ուսուցումների ձևաչափը	3	15
Ուսուցումներն ավանդական մեթոդներով են իրականացվում	3	15
Ուսուցումների թեմաները հետաքրքիր չեն	-	-

Մասնակիցների 55%-ը նշել է, որ շատ ունեն իրենց աշխատանքում տեղեկատվության ազատության ոլորտում գիտելիքն ու հմտությունները զարգացնելու կարիք: 42%-ը մասամբ է զգում նման կարիք: Հատկանշական է, որ միայն 2 հոգի կամ 3%-ն է նշել, որ չունի վերապատրաստումների կարիք տեղեկատվության ազատության ոլորտում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 23



Մասնակիցներին խնդրել ենք նաեւ նշել, թե կոնկրետ ինչպիսի՞ գիտելիքի և հմտությունների կարիք են զգում (առաջարկել ենք նշել իրենց համար առավել կարևորները): Ինչպես երեւում է գծապատկեր 24-ից՝ մասնակիցների մեծ մասը՝ 67%-ը կարիք ունի ծանոթանալ ՏԱ միջազգային չափանիշներին: 50%-ը ցանկանում է զարգացնել Ինֆոգրաֆիկաների և դեբորդերի ստեղծման հմտությունները, 47, 46 եւ 45%-ն էլ ուզում են ծանոթանալ համապատասխանաբար Հանրային կարծիքի ուսումնասիրման գործիքներին, փաստերի ստուգման գործիքներին եւ էլեկտրոնային տեղեկատվության ազատության կառավարման մեթոդներին ու մեխանիզմներին:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 24. Նախընտրելի գիտելիք եւ հմտություններ

Գիտելիք եւ հմտություններ	Կարիք ունեմ	
	հոգի	%
ՉԼՄ օրենսդրության իմացություն	6	9.1
Էլեկտրոնային արխիվացման համակարգեր	17	25.7
Բաց տվյալների հետ աշխատանք	18	27.3
Մեդիա մոնիտորինգի գործիքներ	19	28.8

ՏԱ ազգային օրենսդրության իմացության բարելավում	19	28.8
Պրոակտիվ հրապարակայնության գործիքներ	23	34.8
Սոցիալական մեդիա մարկետինգ	26	39.4
Էլեկտրոնային ՏԱ կառավարման մեթոդներն ու մեխանիզմները	30	45.4
Փաստերի ստուգման գործիքներ	30	45.5
Հանրային կարծիքի ուսումնասիրման գործիքներ	31	47
Ինֆորաֆիկաների և դեշբորդերի ստեղծման հմտություններ	33	50
ՏԱ միջազգային չափանիշների իմացություն	44	66.7

ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Տեղեկատվության ազատությունը ՀՀ-ում առաջընթաց է գրանցել վերջին տարիներին, եւ դա հատկապես տեղի է ունեցել տեղեկատվության ազատության բանիմաց պատասխանատուների շնորհիվ: Անշուշտ, դեռեւս ոլորտում առկա են որոշ հիմնախնդիրներ, որոնց մեծ մասը կարելի է հաղթահարել թիրախավորված, հասցեական եւ արդի կարիքները բավարարող վերապատրաստումների շնորհիվ: Հարցումների հիման վրա կարելի է հանգել հետեւյալ եզրահանգումների եւ առաջարկների:

- 1. Հարցումները ցույց տվեցին, որ տեղեկատվության պատասխանատուներն զգում են իրենց հմտություններն ու գիտելիքը տեղեկատվության ազատության ոլորտում բարելավելու անհրաժեշտություն:** Այս մասին նշել է հարցման մասնակիցների ճնշվող մեծամասնությունը՝ 97%-ը (55%-ը նշել է, որ շատ է զգում կարիք, 42%-ը՝ մասամբ): Միայն 2 հոգի կամ 3%-ն է նշել, որ տեղեկատվության ազատության ոլորտում չունի վերապատրաստումների կարիք:
- 2. Հարցումները ցույց տվեցին նաեւ, որ տեղեկատվության եւ հանրության հետ կապերի աշխատակիցների 37.9%-ը վերջին 3 տարիների ընթացքում որեւէ վերապատրաստման չի մասնակցել ՏԱ կամ հաղորդակցության ոլորտում:** Եւս 37.9%-ն էլ մասնակցել է միայն 1 անգամ վերջին 3 տարիների ընթացքում: 21 անձ կամ 31.8%-ը նշել է որ մասնակցել է տեղեկատվության ազատության վերաբերյալ առնվազն մեկ վերահատրաստման:
- 3. Վերապատրաստումների մասնակցածներից ոչ մեկի համար մինչ այս մասնակցած վերապատրաստումներն անարդյունավետ չեն եղել:** Ճնշող մեծամասնությունը՝ 90.2%-ը նշել է, որ վերապատրաստումները բավարար չափով արդյունավետ են եղել: 9.8%-ի համար դրանք եղել են շատ արդյունավետ:
- 4. Սոցիալական ցանցեր.** Հարցումները ցույց տվեցին, որ բարձր է պետական կառույցների ակտիվությունը սոցիալական տարբեր ցանցերում: Դրանք օգտագործվում են ամեն օր՝ որպես եւ՝ տեղեկություններ տարածելու, եւ՝ լրագրողների ու քաղաքացիների տեղեկություն ստանալու հարցումները ստանալու միջոց: Սակայն, մարմինների ճնշող մեծամասնությունում առկա չեն ո՛չ սոցիալական ցանցերում պաշտոնական գրառումներ անելու, ոչ ստացված հարցումները գրանցելու մշակված միասնական ընթացակարգեր: Միայն 4.5%-ն է նշել, որ իրենց մարմնում առկա են սոց.ցանցերում աշխատելու որոշակի կանոններ: Այսպիսով, **անհրաժեշտ է մշակել գործնական հմտությունների ամփոփ ձեռնարկ՝ ինչպես ապահովել պետական հաղորդակցության քաղաքականությունը սոցիալական հարթակներում: Միաժամանակ, անհրաժեշտ է նաեւ իրականացնել վերապատրաստման դասընթաց՝ առցանց հարթակների և դրանց կիրառության բովանդակային և տեխնիկական առանձնահատկությունների մասին գործնական գիտելիք/հմտություններ փոխանցելու նպատակով:**

5. **Չարցումները նաեւ բացահայտեցին այն կարեւոր խնդիրը, որ մարմիններում առկա է տեղեկատվության ազատության պատասխանատուների, խոսնակների կողմից որոշումներն ինքնուրույն կայացնելու ցածր մակարդակ:** Որոշումներն հիմնականում կայացվում են ոլորտը համակարգող փոխնախարարի/տեղակալի կամ անմիջապես նախարարի/մարմնի ղեկավարի կողմից: Այսինքն, այս ոլորտում լիազորությունների լիարժեք պատվիրակումը բավարար չի իրականացվում, եւ նույնիսկ միկրո որոշումները ստիպված են համաձայնեցնել վերադասի հետ: Որոշումներն ինքնուրույն կայացնելու բացակայությունը կամ ոչ բավարար լինելն ուղղակիորեն ազդում է պատասխանների որակի եւ ժամկետի վրա:
6. **Վերապատրաստումների մասնակիցները նաեւ մեկնաբանել են, թե ինչն է իրենց կարծիքով վերապատրաստումների նվազ արդյունավետ լինելու պատճառը:** Ամենից հաճախ նշված պատճառներն են.
- Պրակտիկ գիտելիքի պակասը ուսուցումների ժամանակ
 - Կանոնավոր ուսուցումների բացակայությունը
 - Ուսուցումների մեթոդաբանությունն արդիական չէ
 - Նույնաբովանդակ ուսուցումների առկայությունը:

Առաջին կետը ուսուցման քարացած մեթոդները բարեփոխելու անհրաժեշտության մասին է: ***Անհրաժեշտ է զուտ տեսական դասընթացները բացառել եւ դրանք իրականացնել ժամանակակից նորարարական ակտիվ մեթոդներով (ուսուցում գործունեության մեջ), տեսականի ու գործնականի ճիշտ համադրմամբ, ինտերակտիվ մեթոդները լայնորեն կիրառելով, նաեւ առցանց ռեժիմով եւ այլն:***

Ինչպես նաեւ, նշվում է կանոնավոր ուսուցումների անհրաժեշտության մասին: ***Կարևոր է նաեւ, որ վերապատրաստումները չլինեն մեկանգամյա,*** որպեսզի մասնակիցը ստացած գիտելիքը կարողանա կիրառել պրակտիկայում եւ նոր դասընթացի գա գիտելիքի ու հմտության մասին սեփական դիտարկումներով:

Չարցումները ցույց տվեցին նաեւ, որ մարդիկ (հատկապես, ովքեր վաղուց են դաշտում ու միաժամանակ ընդունում են ոլորտում գիտելքը բարելավելու կարիքը) հոգնել են նույնաբովանդակ ու նույնաֆորմատ դասընթացներից: ***Շատ դեպքերում վերապատրաստումների խմբերը պետք է կազմվեն ըստ մասնակիցների փորձառության, և տարբեր փորձառություն ունեցողներին տարբեր բովանդակություն պետք է առաջարկել:***

Վերոնշյալը նախանշում է, թե առաջիկա վերապատրաստումներն ինչ հիմնական մեթոդաբանությամբ ու ձևաչափով պետք է իրականացվեն այս խնդիրներից խուսափելու համար: ***Մասնակիցներն ակնկալում են, որ վերապատրաստումները պետք է լինեն արդիական, նոր ձևաչափերով, ինտերակտիվ, նոր մոտեցումներով հագեցած, ինչը հնարավորություն կտա, որ դրանք ոչ միայն լինեն օգտակար, այլև հետաքրքիր, ինչը կրթության արդյունավետության կարևոր բաղադրիչն է:***

7. Թեմատիկ կարիքներ

Մասնակիցներն առանձնացրել են իրենց համար առավել կարևոր թեմաները, որոնց վերաբերյալ վերապատրաստումների կցանկանային մասնակցել: Մասնավորապես.

- Տեղեկատվության ազատության միջազգային չափանիշներ եւ միջազգային փորձ՝ 67%,
- Տվյալների վիզուալացման դասընթաց (ինֆոգրաֆիկաների և դեշբորդերի ստեղծման հմտություններ)՝ 50%,
- Հանրային կարծիքի ուսումնասիրման գործիքներ՝ 47%,
- Փաստերի ստուգման գործիքներ՝ 46%,
- Էլեկտրոնային տեղեկատվության ազատության կառավարման մեխանիզմներ՝ 45%,
- Սոցիալական մեդիա մարկետինգ՝ 39%,
- Պրոակտիվ հրապարակայնության գործիքներ՝ 34.8%,
- ՏԱ ազգային օրենսդրության իմացություն՝ 28.8%,
- Մեդիա մոնիտորինգի գործիքներ՝ 28.8%:

Ինչպես նաեւ, հաշվի առնելով 2020թ. COVID19 առաջ բերած մեծ ռիսկերն ու ազդեցությունը, կարծում ենք նաեւ հատուկ դասընթացի անհրաժեշտություն կա տեղեկատվության ազատության պատասխանատուների սթրեսակայունությունն ապահովելու եւ արտակարգ իրավիճակներում աշխատելու կարողությունները/հմտությունները զարգացնելու նպատակով:

Կարծում ենք, առաջիկայում նախատեսվող վերապատրաստումները պետք է բավարարեն այս կարիքները: